

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Սյունիքի տարածաշրջանային մասնաճյուղ

The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre



ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Փետրվար

2023թ.

Յ Գորիս Ջ

28.02.2023 թ.

Գորիսի բժշկական կենտրոնը 95 տարեկան է

1928 թվականից գործող Գորիսի բժշկական կենտրոնը 95 տարեկան է: Կառույցն այսօր արդեն 329 աշխատակից ունի, իսկ հիվանդներին սպասարկում են բարձր որակավորում ունեցող 70 բժիշկներ: 2010 թվականին հիմնանորոգված ԲԿն հազեցվել և անընդհատ հազեցվում է ժամանակակից սարքավորումներով: Բժշկական կենտրոնը իրականացնում է հիվանդանոցային, արտահիվանդանոցային և շտապ օգնության ծառայություններ:

- 90 մահճակալ ունեցող կառույցում գործում են
- վիրաբուժական,
 - մանկաբարձագինեկոլոգիական
 - թերապևտիկ
 - մանկական
 - ինֆեկցիոն
 - հեմոդիալիզային բաժանմունքները:

Այստեղ իրականացվում են պլանային և անհետաձգելի վիրաբուժական, վնասվածքաբանական, ուռուլոգիական, անոթային վիրաբուժական, քիթ-կոկորդ-ականջաբանական և մանկաբարձագինեկոլոգիական միջամտություններ և լապարոսկոպիկ վիրահատություններ:

Բժշկական կենտրոնում գործում է ժամանակակից սարքավորումներով հազեցված լաբորատոր-գործիքային ախտորոշիչ ծառայություն, որը իրականացնում է մեզի, արյան (կլինիկական, բիոքիմիական, իմունոֆերմենտային, սեռոլոգիական) և գործիքային (ուլտրաձայնային, թվային ֆլյուրոգրաֆիա, էնդոսկոպիա, էլեկտրասրտագրում) համալիր հետազոտություններ: Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ ծառայությունները մատուցվում են նաև պետական պատվերի շրջանակներում անվճար՝ Գորիսի տարածաշրջանի բոլոր բնակիչների համար, իհարկե համապատասխան բժշկական ցուցումների և բուժող բժշկի ուղեգրի առկայության դեպքում: Իսկ կենտրոնի պոլիկլինիկայում Գորիսի և տարածաշրջանի բնակչության առողջության առաջնային պահպանմանը հետևում են համապատասխան մասնագիտացում անցած 11 ընտանեկան բժիշկներ:

«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շտապօգնության ծառայությունը աշխատում է 24ժամյա գրաֆիկով և իր գործի մեջ հմուտ թիմով: Վերջերս էլ այս ծառայությունը հազեցվել է նորագույն սարքավորումներով և տրանսպորտային միջոցներով, իսկ բուժանձնակազմը վերապատրաստվել կրթական ծրագրերով:

Ի դեպ՝ շտապ օգնության կանչերն իրականացվում են անվճար՝ պետական պատվերի շրջանակներում:

Եվ ամենակարևորը. «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում սպասարկումն իրականացվում է հոգատար և պրոֆեսիոնալ աշխատակազմի կողմից:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/gorisi-bzhshkakan-kentrony-95-tarekan-e>

24.02.2023 թ.

Նոնաձորում ոգեպահիչ և արարող մարդկանց հանդիպեցինք, թեև գյուղը կքաճ է բազում խնդիրներից

Յուրաքանչյուր գյուղ (մարդու նման) ունի իր ճակատագիրը՝ ոչ մեկին չնմանվող, չկրկնվող: Նույնը վերաբերում է Մեղրու տարածաշրջանի Նոնաձոր գյուղին...

Նոնաձորը վարչական տարածքով Սյունիքի ամենախոշոր բնակավայրերից է:

Գյուղի ներկա ընթացքի մասին, բնականաբար, առաջին տեղեկությունները ստանում ենք Ալեքսան Բոյաջյանից. բնակավայրի վարչական ղեկավարն է 2016 թ. նոյեմբերից՝ Մեղրի համայնքի խոշորացումից հետո: Ծնվել է Մեղրիում, որտեղ էլ դպրոց է հաճախել, 2000 թվականից բնակվում է Նոնաձորում, զբաղվում գյուղատնտեսությամբ:

Նոնաձորում գրանցված է 44 տնտեսություն, բնակիչների թիվը՝ 124: Երիտասարդ ընտանիքներ կան, ծնունդներ են լինում...

Նոնաձորը բնավ էլ հանգչող փեթակ չի հիշեցնում, ինչպես Սյունիքի լեռնային ու սահմանային շատ գյուղեր... Դեռ ավելին՝ սուբվենցիոն ծրագրով նախատեսվում է բնակավայրում մանկապարտեզ կառուցել...

Պաշտոնական փաստաթղթերում, որպես բնակավայրի գյուղատնտեսական գործունեության ուղղություններ, նշվում են անասնապահությունը և դաշտավարությունը: Բայց իրականությունն այն է, որ գյուղն ունի 84 հեկտար հող, և գյուղացիք հիմնականում զբաղվում են պտղաբուծությամբ, ստանում նուռ, թուզ, արքայանարինջ. վերջին երկուսից ընտիր չիր են պատրաստում: Ընդհանրապես նոնաձորցիների եկամտի աղբյուրը հենց այդ մրգերն են...

Նոնաձորում էր գտնվում «Գորիս» քրեակատարողական հիմնարկի Մեղրու տեղամասը, որտեղ պատիժ էին կրում անզգուշությամբ հանցանք կատարածները՝ մեկ տասնյակից ավելի մարդ: Նոնաձորի վարչական ղեկավարը նշում է, որ գյուղի վարչական տարածքում գտնվող 153 հեկտար հողատարածքները 1994-ին հատկացրել են հանրապետության Արդարադատության նախարարությանը, կամ որ միննույնն է՝ վերոնշյալ քրեակատարողական հիմնարկին, որը 2018-2019 թվականներից չի գործում, և հիմա տարբեր ասյաններ գրություններ են հղել՝ այդ հողատարածքները Նոնաձորին վերադարձնելու՝ որպես համայնքային սեփականություն, որից հետո միայն կարող են այն լիարժեքորեն մշակել ու արդյունք ստանալ:

Ինչպես տեղեկացանք՝ անասնապահությունը, որպես այդպիսին, վերանում է գյուղում: Քանզի ամառային արոտավայրերը 44-օրյա պատերազմից և դրան հաջորդած իրադարձություններից հետո հայտնվել են հակառակորդի դիրքերի անմիջական հարևանությամբ, որոշ տեղերում դարձել դիրքային հատվածներ: Եվ իրողությունն այն է, որ լուրջ խնդիր է դարձել այդտեղ անասուն արածեցնելը: Ճիշտ է, գյուղում այսօր հաշվվում է 120 ոչխար, խոշոր եղջերավոր անասուններ էլ կան, բայց գյուղատնտեսության այդ ճյուղն այլևս ապագա չունի, քանի դեռ սահմանամերձի արոտավայրերը լիարժեք չեն օգտագործվում:

Բանջարաբուստանային մշակաբույսեր՝ կանաչեղեն, կարտոֆիլ, լոբի ստանում են տնամերձերից. այլ տեղ աճեցնելու հնարավորություն չունեն, քանի որ բնակավայրի

հիմնախնդիրը տարիներ ի վեր մնում է ոռոգման և խմելու ջուրը: «Ամենաուշը մարտի 1-ից ոռոգման ջուրը պիտի հասնի Նոնաձոր, որովհետև այդ ժամանակ ենք ծառատունկը սկսում: Բայց ոռոգման ջուր մատակարարելու գործում բոլորին մի արշինով են չափում, - մանրամասնում է վարչական ղեկավարը,- և մեզ ոռոգման ջուր մատակարարում են մարտի վերջին, ապրիլի սկզբին: 2015 թվականին «JFAD»-ի ծրագրով ոռոգման համակարգ են կառուցել, որի միջոցով ջուրը Լեհվազի մոտից հասնում է (ինքնահոս եղանակով) Նոնաձոր: Պարզապես «Մեղրի» ջրօգտագործողների ընկերությունը նորոգման աշխատանքներն ավելի վաղ պիտի սկսի, որ ջուրն Արաքսի մեջ թափվելու փոխարեն հասնի մեզ: Մարդիկ ծառ են տնկում, և ով ավտոմեքենա ունի՝ ջուրը մեքենայով տեղափոխում է, նորատունկի տակ մի դույլ ջուր լցնում, որ կարողանան ծառը պահել»:

Մինչև օգոստոս Մեղրիի ոռոգման համակարգը լիարժեք գործում է, խնդիրները սկսվում են դրանից հետո, երբ Մեղրի գետը բարակում է, ջուրը հազիվ հերիքում է Մեղրի քաղաքին և մերձակա բնակավայրերին: Այդ ժամանակ էլ Նոնաձորում անցնում են մեխանիկական ոռոգման:

Նոնաձորում գործում է եռաստիճան ոռոգման համակարգ, բայց վթարներն անպակաս են լինում մայրուղու մաշվածության պատճառով: Նաև պոմպերն ու շարժիչները հին են՝ խորհրդային արտադրության, խողովակաշարը տեղ-տեղ մաշված է, պահեստամասերը դժվարությամբ են գտնվում, տեղ են հասնում ուշացումներով: Իսկ այդ ամենն ամռան շոգից թառամող բույսին չես բացատրի: Գյուղացիներն ամիսը մեկ են այգի ջրում, սպասում լավ օրվա գալուն, սակայն հաջորդ տարի նույն պատմությունը կրկնվում է ...

Խմելու ջրի մատակարարման հարցում էլ խնդիրներ են ծագում օգոստոսից, երբ գյուղի քյարիզներից մեկը չորանում է, մնում են մյուս քյարիզի հույսին, բայց, այնուամենայնիվ, կարողանում են ամռանը 2-4 ժամ ջուր տալ բնակչին:

Այդուհանդերձ, նոնաձորցիներին հուզող ամենակարևոր խնդիրն անբարեկարգ, քիչ ասել է թե՛ դժվարանցանելի ճանապարհն է: Ի դեպ, ճանապարհի նորոգումը մի քանի տասնամյակի պատմություն ունի. 2003-ին մեր թերթում («Սյունյաց աշխարհ», 10 մայիսի 2003 թ.) հրապարակում էի պատրաստել Նոնաձորի մասին. ո՞րն է գյուղի առաջ ծառացած ամենահրատապ խնդիրը, այն ժամանակվա գյուղապետ Գրիգոր Բոյաջյանը (ներկայիս վարչական ղեկավարի հայրը) պատասխանել էր՝ հիմնականը ճանապարհի նորոգումն է, մնացածն ինքներս էլ կանենք: Ինչպես տեսնում ենք, երկու տասնամյակ անց ճանապարհի հիմնանորոգումը հրատապ և այժմեական է նաև մեր օրերում: Անցած տարիներին ճանապարհի մասնակի նորոգումներ են եղել, բայց չափազանց հեռու է հիմնախնդրի լուծումից: Մասնավորապես, անցած տարի գարնանը մոտ ութ կիլոմետր ճանապարհ մեղրեցի ճանապարհաշինարարները նորոգել են, բայց դա ժամանակավոր լուծում է:

Վերջերս Մեղրիի «ՃՇՇՁ» ընկերության գլխավոր տնօրեն Ազատ Գասպարյանը «Սյունյաց երկրի» հետ հարցազրույցում փոխանցեց, որ Շվանիձոր-Նոնաձոր ճանապարհահատվածի հիմնանորոգումն իր վաղեմի երազանքն է, և դրա նախագծման աշխատանքներն ավարտական փուլում են: Ինչպես ասում են, նոնաձորցիները դարձյալ պիտի սպասեն և հուսան...

Ուրախացնողն այն է, որ նաև Մեղրիի համայնքապետարանի աջակցությամբ շաբաթական չորս անգամ՝ 2022 թ. սեպտեմբերից երթուղային փոխադրամիջոցը գյուղ է

մտնում, ուղեվարձն էլ սիմվոլիկ մի գումար է՝ 200 դրամ: Այլապես տաքսու վարորդները 10-15 հազար դրամ են պահանջում Մեղրուց Նոնաձոր հասնելու համար: Վերջիններիս էլ չի կարելի մեղադրել, այդքան գումարը չի փրկի, եթե Նոնաձորի անբարեկարգ ճանապարհի պատճառով մեքենան անսարքության մատնվի:

Ինչո՞վ էր ապրում և շնչում հակառակորդի անմիջական «հարևանությամբ» գյուղը 44-օրյա պատերազմի օրերին. **«Ոչ մեկը գյուղից դուրս չի եկել,- մանրամասնում է Ալեքսան Բոյաջյանը,- պատերազմի օրերին տղաները դիրքերում են եղել, կանայք նուռ էին հավաքում, հետամուտ լինում, որ բերքը չփչանա»:** Այնուամենայնիվ, գյուղը վնասներ կրել է, 14 ձի անցել է թշնամու կողմը. 2020 թ. նոյեմբերին տղաները դեռ չէին իջել դիրքերից, անասուններն անտեր էին մնացել: Բնակիչները դիմել են համայնքապետարան՝ փոխհատուցում ստանալու խնդրանքով:

Նաև հետաքրքրվեցինք, թե միջազգային կազմակերպությունների միջոցով ի՞նչ ծրագրեր է իրականացվել բնակավայրում: WW Բնության համաշխարհային հիմնադրամը դպրոցին հատկացրել է արևային մարտկոցներ, որոնց շնորհիվ մեծապես լուծվեց դպրոցի դասասենյակների ջեռուցման խնդիրը:

«IFAD»-ի (գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ) ծրագրով գյուղացիներին հատկացվել են արևային չորանոցներ: **«Դրանք փոքր բիզնես ծրագրեր են, որ բնակչությանը բավականին օգնում են»,** - մանրամասնում է Ալեքսան Բոյաջյանը:

Իսկ սեփական ծրագրերից Նոնաձորի վարչական ղեկավարն առանձնացրեց խաղահրապարակի և հանդիսությունների սրահի կառուցումը: Առաջինի ֆինանսավորումը Մեղրիի համայնքապետարանն է իրականացնելու, իսկ երկրորդի դեպքում խնդիրը կքննարկվի, եթե հողհատկացում լինի, ավելի ստույգ՝ եթե կիսաքանդ կառույցն Արդարադատության նախարարության հաշվեկշռից հանեն և վերադարձնեն համայնքին:

Նախորդ անգամ՝ 2013 թվականի գարնանը, երբ դարձյալ աշխատանքային այցով Նոնաձորում էինք, համայնքապետարանի շենքի հարևանությամբ լքված և կիսաքանդ շենքեր կային, որ այժմ հողին էին հավասարացվել: Մեր զրուցակիցը բացատրեց, որ Մեղրիի զարգացման հիմնադրամը «Յունիբանկի» հետ համատեղ նախատեսում են բնակելի շենքեր կառուցել: Արդեն հինգ շահառու հաստատվել է, նախապատվությունը տրվել է երիտասարդ ընտանիքներին, որոնց բնակֆոնդը վատ վիճակում է...

Երբ հրաժեշտ էինք տալիս, վարչական ղեկավարը հուսադրող խոսքեր ասաց. **«Մենք այստեղ կմնանք, Նոնաձորը կշենացնենք, միայն ճանապարհի և խմելու ջրի հարցը լուծեն»:**

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/nrnadzorum-ogepind-ev-ararokh-mardkants-handipetsinq-teev-gyukhy-kqats-e-bazum-khndirnerits>

23.02.2023 թ.

Գեորգ Փարսյանն աշխատանքային խորհրդակցություն է անցկացրել համայնքի գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարների հետ

Այսօր՝ փետրվարի 23-ին, Կապան համայնքի ղեկավար Գեորգ Փարսյանն աշխատանքային խորհրդակցություն է անցկացրել համայնքի գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարների հետ՝ գյուղերում առաջացած ընթացիկ և հրատապ խնդիրները քննարկելու և լուծման հնարավոր տարբերակներ գտնելու նպատակով:

Աշխատանքային խորհրդակցության ընթացքում քննարկվել են գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստական և գարնանացանի կազմակերպման, պատերազմի հետևանքով անասնազվիաքանակի անկման, խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, գյուղերում իրականացվող շինարարական աշխատանքներին ուղղված մի շարք հարցեր:

Հանդիպմանը համայնքի ղեկավարը ներկաների ուշադրությունը սևեռել է հատկապես կենսական նշանակություն ունեցող խմելու ջրի սակավության լուրջ խնդրի վրա և հորդորել մաքսիմալ հետևողականություն դրսևորել՝ ջրային պաշարների ճիշտ կառավարման և խնայողաբար օգտագործման հարցում:

Քննարկվել են նաև ոլորտին վերաբերող այլ հարցեր, հնչել առաջարկներ: Վարչական ղեկավարների կողմից բարձրաձայնված խնդիրների լուծման ուղղությամբ տրվել է համապատասխան հանձնարարականներ:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/Kapanmunicipality/posts/205799035324220>

22.02.2023 թ.

Կառավարության սյունիքյան քաղաքականությունը թափանցիկության կարիք ունի

Ազգային ժողովի պատգամավոր Արսեն Թորոսյանի հետ մեր երրորդ և վերջին գրույցի թեման ՀՀ կառավարության՝ Սյունիքում իրականացվող տարածքային քաղաքականության որոշ հարցերի է առնչվում, մասնավորապես՝ թափանցիկությանը:

- Պարոն Թորոսյան, Կառավարության սյունիքյան քաղաքականությունը բազմաթիվ հարցերի տեղիք է տալիս: Եվ, ցավոք, հաճախ մարդիկ չեն կարողանում ստանալ մտահոգող հարցերի պատասխանը:

Դրանցից մեկն առնչվում է 2021-ին ՀՀ կառավարության կողմից Սյունիքին հատկացված 1,2 կամ 1,5 մլրդ դրամին, որը տնօրինվել է Սյունիքի հարցերով աշխատանքային խմբի կողմից:

Ստում են՝ նման հատկացումներ կատարվել են նաև 2022-ին:

Գոնե ուշացումով կարո՞ղ ենք իմանալ՝ 2021-ին հատկացված գումարը կոնկրետ ի՞նչ նպատակով և ո՞ր համայնքներում է ծախսվել:

- Սկսեմ հարցի վերջից: Երբ կառավարությունը սոցիալապես խոցելի մի խմբի համար ծրագիր է իրականացնում, ապա մեկ ուրիշ խումբ հարց է բարձրացնում՝ ինչո՞ւ նրանց համար և ոչ թե մեր խմբի համար:

Այսօր նման հարցերի առնչվեցինք նաև Խնածախ գյուղում՝ բնակիչների հետ հանդիպման ընթացքում:

Այդ կապակցությամբ հետևյալը պիտի ասեմ՝ եթե կառավարությունն ինչ-որ բան անում է, դա չի նշանակում, որ մյուս խնդիրները չի ուզում լուծել: Պարզապես կա առաջնահերթությունների հարց... Կառավարությունն էլ անսխալական չէ, կարող է և առաջնահերթությունների ճշգրտման կարիք էլ լինի...

Հիմա՝ բուն հարցի մասին:

Այդ ժամանակ վարչապետի աշխատակազմի ղեկավարն էի, երբ վարչապետի խորհրդական Ռոբերտ Ղուկասյանը գործուղված էր Սյունիքի մարզ ու ղեկավարում էր աշխատանքային տվյալ խմբի գործունեությունը: Եվ նրան տրվել էր լիազորություն՝

կառավարության կողմից հատկացված գումարները տնօրինելու, որոշ օպերատիվ հարցեր լուծելու համար:

Ինչո՞ւ է դա արվել:

Երբ (դժբախտաբար) 44-օրյա պատերազմում պարտվեցինք, մենք հասկացանք, որ ստեղծված իրավիճակում ամենախոցելի տարածքը Սյունիքի մարզն է: Եվ անհրաժեշտություն առաջացավ՝ օպերատիվ կարգով որոշ հարցեր լուծել, իսկ պետական բյուջեն նման «գործիքներ» չունի, որ կարողանանք գումարն ինչ-որ մեկին տանք՝ ասելով՝ գնա և ինչ ուզում ես արա, միայն հարցը լուծիր: Դրա համար նման մեխանիզմ ստեղծվեց, որը, կարծում եմ, բավական էֆեկտիվ աշխատեց: Ինքս մի քանի դեպք գիտեմ, թե ինչի վրա է ծախսվել հատկացված գումարը: Օրինակ, ծախսվել է Սիսիանի բժշկական կենտրոնի վրա, տարբեր ծառայությունների համար տրանսպորտային միջոցներ են ձեռք բերվել՝ ԱԻՆ, ոստիկանություն, գյուղացիական տնտեսությունների համար թեթև գյուղտեխնիկա...

- Շատ լավ, այդ դեպքում ինչո՞ւ կատարվածը՝ հասցեական և մանրամասն չներկայացնել հանրությանը:

- Իհարկե, պետք է ներկայացնել, միանշանակ պետք է ներկայացնել: Շատ բաներ են արվել, թեև ինքս վստահ չեմ, որ ամեն ինչ գիտեմ, ասում եմ այն, ինչի հետ առնչվել եմ ու նաև ինչ-որ գիտեմ մամուլից: Բայց գործող մարզպետը, կարծում եմ, ավելի լավ գիտի՝ ինչ է արվել: Եվ, օրինակ, եթե ես նրա փոխարեն լինեի՝ մի հաշվետվություն կիրապարակեի՝ տող առ տող ներկայացնելով ծախսերը: Եվ առիթն օգտագործելով՝ կոչ եմ անում, որ նա դա անի: Նաև Ձեզ եմ խնդրում, որ այդ հարցով իրեն դիմեք...

Եկավ մի պահ, որ կառավարությունը հասկացավ՝ այդ մեխանիզմով աշխատելը, կարծես, այլևս շարունակելու իմաստ չունի: Ստացվում էր այնպես, որ առավելություն է տրվում մի մարզի, իսկ մյուս խոցելի մարզերին՝ ոչ. Գեղարքունիք, Վայոց ձոր, Տավուշ: Ու որոշվեց՝ այդ գումարները, որոնք բյուջեում կլինեն, ուղղել ըստ գերատեսչությունների:

- Ի՞նչ սկզբունքով և ովքե՞ր են Սյունիքին հատկացվող նմանատիպ պետական միջոցները տնօրինում: Արդյո՞ք այդ միջոցները տնօրինողները չպետք է տիրապետեն մարզի հիմնախնդիրներին:

- Դուք տեսնում եք, որ պետական բյուջեի աճ է տեղի ունենում ամեն տարի և բոլոր ոլորտային ծրագրերով նույնպես աճ է գրանցվում: Դա վերաբերում է բոլոր մարզերին և մեր կյանքի ամենատարբեր ոլորտներին՝ կապիտալ շինարարություն, ճանապարհաշինություն, դպրոցաշինություն, մանկապարտեզաշինություն, հիվանդանոցներ, բուժկետեր...

Նաև վստահ եմ, որ գիտեք՝ Հյուսիս-հարավի հատվածներից հիմա ամենաառաջնայինը Սյունիքի հատվածն է, որտեղ լինելու են թունելներ, կամուրջներ, և կառավարությունը հետևողականորեն դրանով զբաղվում է:

Նման ծրագրեր իրականացնելիս կամ միջոցներ հատկացնելիս համապատասխան պետական կառույցները, նաև տարածքային ու համայնքային իշխանություններն անհրաժեշտ հիմնավորումներ են ունենում:

- Եվրոպական Միությանն անդամակցող մի խումբ երկրներ հունվարի 18-ին հայտարարեցին Սյունիքին աջակցող իրենց նախաձեռնության մասին: Նախաձեռնության հինգ տարվա բյուջեն շուրջ 51 մլն եվրո է: Ի՞նչ սկզբունքով են բաշխվելու այդ միջոցները կամ որոշվելու ծախսերի ուղղությունը:

- Եվրոպական Միության մի շարք երկրներ, նաև Շվեյցարիան, որ Եվրոպական Միության անդամ չէ, հաշվի առնելով, որ Սյունիքը շատ կարևոր տարածք է ու ոչ միայն Հայաստանի, այլև Եվրոպայի համար, որոշել են ներդրումներ անել, որպեսզի Սյունիքը լինի ավելի պաշտպանված ու բարեկեցիկ, որպեսզի մարդիկ չուզենան հեռանալ Սյունիքից:

Ես մեկ ծրագիր գիտեմ՝ 20 մլն եվրո արժողությամբ. դա «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» կենտրոնների կառուցումն է Գորիսում և Կապանում, որի օրինակն ունենք Լոռու մարզի Դեբեդ գյուղում:

Եթե առիթ ունենաք և այցելեք այնտեղ, ապա կտեսնեք, թե ինչպիսի քաղաքակրթական միջավայր է ստեղծվել կենտրոնի շնորհիվ: Երեխաներն այցելում են այնտեղ, իրականացվում են գյուղատնտեսական ծրագրեր՝ անասնապահություն, պանրագործություն, հողագործություն, երեխաների համար ակադեմիական կրթության դասընթացներ, որպեսզի կարողանան հետո բուհեր ընդունվել, նաև բուհերի ուսանողների կրթաթոշակային ծրագիր... Այսինքն՝ կենտրոնի շուրջ և կենտրոնի շնորհիվ ստեղծվել է հաճելի աուրա:

Այդպիսի կենտրոններ ենք ունենալու նաև Գորիսում ու Կապանում: Դրանք մնայուն բաներ են, կայուն, տասնամյակներով աշխատող կառույցներ:

Այլ ծրագրեր նույնպես կան Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող՝ նշված բյուջեի շրջանակում:

Կարծում եմ՝ հատկապես տեղական ու տարածքային իշխանությունները պետք է հավելյալ ջանքեր գործադրեն, որպեսզի մարդկանց մատչելի բացատրեն, թե ինչ է կառավարությունն անում իրենց համար և ինչպիսի միջոցներով՝ կլինեն Եվրոպական Միության միջոցներ, կլինեն պետական բյուջեի կամ համայնքային բյուջեի միջոցներ, մարդիկ պետք է իմանան՝ գումարները որտեղից են հատկացվում և ինչ նպատակով ու ոնց են ծախսվում...

- Պարոն Թորոսյան, մեր զրույցը՝ երեք մասից բաղկացած, ավարտեցինք, շնորհակալություն հետաքրքրող հարցերին պատասխանելու համար: Ձեզ՝ հաջողություն:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/karavarutyany-syuniqyan-qakhaqakanutyuny-tapantsikutyan-kariq-uni>

22.02.2023 թ.

Սյունիք ՀՀ-ի անդրադարձը՝ Հրանտ Բաղդասյանի հիշատակին նվիրված միջոցառումներին Տեսանյութը՝ <https://bit.ly/3SJCzK>

21.02.2023 թ.

Հանքարդյունաբերության արդի մարտահրավերները եւ չիրացվող ներուժը

Հայաստանի հանքագործների եւ մետալուրգների միության նախագահ, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյանն այսօր լրագրողների հետ հանդիպմանն ամփոփել է 2022 թվականը, ներկայացրել ոլորտի արդի մարտահրավերները եւ տեսակարար կշիռը բյուջետային մուտքերի կառուցվածքում:

Banks.am-ն առանձնացրել է հանդիպման առանցքային հատվածները

Մարտահրավերները

Այն մարտահրավերները, որոնք ունենք ոլորտում եւ ընդհանրապես տնտեսության մեջ,

մեծամասամբ սկսել են 2022 թվականից: Ամենածանր եւ ամենադժվար գործոնը դրամի ամրապնդումն է: Ոլորտը, ինչպես նաեւ մնացած արտահանող կազմակերպությունները, շատ ծանր դրության մեջ են հայտնվել, քանի որ կազմակերպություններից շատերի ծախսային մասը դրամային է, իսկ հասույթը՝ արտարժույթով: Սա բերել է նրան, որ ինքնարժեքն աճել է, եւ ոլորտի շատ կազմակերպություններ փաստացի վնասով են աշխատում:

Այս հարցը մենք մի քանի անգամ ներկայացրել ենք կառավարությանը: Ցավոք, խնդիրն իրականում շատ ավելի խորքային է: Եթե Կենտրոնական բանկը քայլեր ձեռնարկի եւ դրամը թուլացնի, դա էլ կարող է բերել հակառակ իրողության: Այսինքն՝ հասկանում ենք, որ ուղղակիորեն այս խնդիրը շատ դժվար է լուծել: Մենք մի քանի առաջարկ ենք ներկայացրել կառավարությանը, թե դրամի այսպիսի ամուր կուրսը պահպանվելու դեպքում ինչ քայլեր կարելի է ձեռնարկել, որ ոլորտն եւ արտահանող կազմակերպությունները չունենան այդ խնդիրները:

Նախորդ տարի ոլորտում եւս երկու խնդիր ունեինք, բայց այս պահի դրությամբ դրանք արդեն չկան: Մեկն աննախադեպ արտահանման տուրքն էր, որը, մեր կարծիքով, տնտեսապես հիմնավորված չէր, մյուսը՝ հիմնական մետաղների գների անկումը: Այժմ արտահանման տուրքը չկա, իսկ մետաղների գներն արդեն վերականգնվել են:

Արտահանման ծավալները

2021թ.-ի համեմատ 2022-ին հանքարդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված է եղել երկրորդ խոշոր արտադրողի՝ Թեղուտի հանքի չաշխատելով: Բայց մնացած բոլոր արտադրողներն ունեցել են աճ: ԶՊՄԿ-ն մոտ 20% ավելի արտադրանք է տվել եւ արտահանել: Մնացած բոլոր կազմակերպությունները եւս արտահանման ծավալների խնդիրներ չեն ունեցել:

Ամուլսարը եւ չիրացվող ներուժը

Հայաստանում կա մեկ միջազգային մակարդակի խոշոր հանքագործական կազմակերպություն՝ ԶՊՄԿ-ը, երկրորդ այդպիսի էական կազմակերպությունը պետք է լիներ Ամուլսարի հանքը: Բայց այն ինչ պատահեց Ամուլսարի հետ, շատ վատ էր: Արեւմտյան միջազգային ներդրողները փորձում էին Հայաստանում սկսել մի մեծ նախագիծ, ինչը չստացվեց, չնայած նրանք ոչ մի օրենք չէին խախտել: Երբ խոսում ենք ԶՊՄԿ-ից, որի վճարած հարկերը շատ մեծ են, մի այդպիսի կորուստ վերջին 4-5 տարում ունենք Ամուլսարի դեպքում: Խոսքը հարյուր միլիոնավոր դոլարների չիրականացված մուտքի մասին է:

Մյուս այդպիսի հանքը Թեղուտն էր, բայց հուսանք, որ կգործի: Այս երկու կազմակերպությունները մեր ոլորտի մոտ 50%-ի չափ արտադրանք կարող էին տալ: Ինչ վերաբերում է «Գեոպրոմայնինգ գոլդ»-ին՝ այս կազմակերպությունը եւս ոչ այնքան լավ վիճակում է: 44-օրյա պատերազմի հետեւանքով հանքի մի մասը մնաց թշնամու տարածքում: Աշխատանք տարվում է, նույնիսկ միջազգային մակարդակով, որ հանքավայրը լիարժեք ծավալներով աշխատի:

Ոլորտի տեսակարար կշիռը

Պետական բյուջեի եկամուտների մասով 2022թ.-ը ՀՀ պատմության մեջ աննախադեպ է՝ մոտ 2 տրիլիոն դրամի չափ եկամուտներ են հավաքագրել, որի մոտ 10%-ն ապահովել է

հանքարդյունաբերությունը: Այսինքն՝ մոտ 200 մլրդ դրամի չափով հանքարդյունաբերությունը եկամուտներ է ապահովել պետբյուջե:

Աղբյուրը՝ <https://banks.am/am/news/interviews/25482>

20.02.2023 թ.

Հրանտ Բաղդադյանի հիշատակին նվիրված շախմատի հուշամրցաշար

Կայացավ Հրանտ Բաղդադյանի հիշատակին նվիրված շախմատի հուշամրցաշարը:

Մրցանակակիրներ՝

🏆 1-ին տեղ - Մարգարյան

🥈 2-րդ տեղ - Տորսաժ

🥉 3-րդ տեղ - Վերիշեն

Լավագույն խաղացողներ՝

🏆 1-ին տախտակ - Քարամյան Վարդան (Մարգարյան)

🥈 2-րդ տախտակ - Ալեքսանյան Ալեքս (Մարգարյան)

🥉 3-րդ տախտակ - Պետրոսյան Կարեն (Մարգարյան)

🏆 4-րդ տախտակ - Բաղդասարյան Ահարոն (Վերիշեն)

12 թիմերի մասնակիցների ոգևորվածությունը և երախտագիտությունը ստիպում է այս մրցաշարը դարձնել ամենամյա: Շնորհակալություն ենք հայտնում Գորիսի մանկապատենական սպորտդպրոցին՝ աջակցության համար:

Աղբյուրը՝ <https://bit.ly/3YfunDR>

19.02.2023 թ.

Հայոց խորհրդարանականները Սյունիքի արևելյան սահմանագոտում

Փետրվարի 18-ին Գորիս էին ժամանել Ազգային ժողովի մի խումբ պատգամավորներ՝ Արսեն Թորոսյան, Վաղարշակ Հակոբյան, Դավիթ Դանիելյան, Նարեկ Գրիգորյան:

Այցելության նպատակն էր տեղում՝ անմիջաբար, ծանոթանալ Սյունիքի արևելյան սահմանների պաշտպանական համակարգին, լսել սահմանապահ բնակավայրերի բնակիչների մտահոգությունները:

Սյունիքից ԱԺ պատգամավոր Դավիթ Դանիելյանը, ով նախաձեռնել էր պատգամավորների շրջայցը, նախօրեին հանդիպում էր ունեցել Հատուկ նշանակության բանակային կորպուսի նորանշանակ հրամանատար, գնդապետ Արմեն Գյոզայանի հետ, ծանոթացել սահմանամերձի օպերատիվ կացությանը և քննարկել պատգամավորների՝ առաջնագիծ մեկնելուն առնչվող հարցեր:

Նույն օրը պատգամավորն այցելել է «Զանգերի կենտրոն» ընկերություն:

2022-ի մայիսին հիմնադրված այդ ընկերությունը, որ տեղաբաշխված է «Գորիս» հյուրանոցում, արդեն իսկ 28 աշխատատեղ ունի Գորիսում, 16-ը՝ Կապանում, 6-ը՝ Սիսիանում:

Ընկերության հիմնադիր Վախթանգ Հովսեփյանը ներկայացրեց առաջիկա ծրագրերը, մարզում նոր աշխատատեղեր հիմնելու իրենց մտադրությունը:

Մինչև սահմանամերձ մեկնելը Դավիթ Դանիելյանը եւ Նարեկ Գրիգորյանն այցելեցին Գորիսի պետական քոլեջ, հանդիպեցին կրթօջախի դասախոսական անձնակազմի հետ, ծանոթացան հաստատության գրեթե մեկդարյա փառավոր ուղուն, քննարկեցին ուսումնական հաստատության առջեւ ծառացած հիմնախնդիրները:

Այնուհետեւ խորհրդարանականները՝ ամբողջ կազմով, մեկնեցին Գորիս-Ստեփանակերտ մայրուղուն կից՝ Խնձորեսկի խաչմերուկի մերձակայքի շինհրապարակ, որտեղ գործարար Սենիկ Ջուլիակյանի նախաձեռնությամբ կառուցվում է արտադրական ու սպասարկման համալիր, որի շահագործման արդյունքում կստեղծվի մինչև 150 աշխատատեղ: Համալիրը, որի գործարկումն ակնկալվում է առաջիկա ամռանը, կդառնա նաեւ տարածաշրջանում արտադրվող գյուղմթերքների իրացման կենտրոն:

Ի դեպ, այդ վայրի հետ կապված ավանդազրույցներ կան՝ հին մատյաններից մեզ հասած, որ կհետաքրքրի նաեւ զբոսաշրջիկներին:

Խորհրդարանականների հաջորդ կանգառը Տեղ գյուղն էր, որտեղ էլ համայնքի ղեկավար Դավիթ Ղուլունցի հետ քննարկվել են խոշորացված համայնքի բնակավայրերի իրավիճակն եւ առկա խնդիրները, նաեւ դրանց լուծման ուղիները:

Տեղ համայնքն Ադրբեջանի հետ ունի 63 կմ սահման. պատահական չէ, որ բնակիչների գլխավոր մտահոգությունը կապված է անվտանգության համակարգի հետ:

Պատգամավորական խմբի առաքելության հիմնական նպատակը, ինչպես նշեցինք, հայ-ադրբեջանական սահմանի իրավիճակին, ինչպես եւ զինվորների սոցիալ-կենցաղային պայմաններին ծանոթանալն էր, ինչի համար էլ եղան առաջնագծի մի շարք դիրքերում:

Այդ ընթացքում պատգամավորները հանդիպումներ են ունեցել նաեւ համայնքի տարածքում գտնվող աշխարհագրային ջոկատների, ԵԿՄ ստորաբաժանումների հետ:

Վերջում պատգամավորները հանդիպումներ ունեցան համայնքի բնակիչների հետ եւ ունկնդիր եղան գյուղացիներին մտահոգող հարցերին:

Ազգային ժողովի պատգամավորներին ուղեկցում էր ԵԿՄ Սյունիքի մասնաճյուղի նախագահ Մելիքսեթ Պողոսյանը:

Անշուշտ, գնահատելի է Ազգային ժողովի պատգամավորների այդ նախաձեռնությունը: Դա, ըստ էության, Սյունիքի իրավիճակին եւ սահմանամերձի մտահոգություններին ծանոթանալու, առկա խնդիրները երկրի ղեկավարությանը ներկայացնելու յուրօրինակ աշխատաձեւ է, ինչը, կարծում ենք շարունակական պետք է լինի եւ ունենա գործնական արդյունքներ:

Սահմանապահ գյուղերի բնակիչները հույս հայտնեցին, որ իրենց բարձրացրած հարցերը կընդհանրացվեն, եւ դրանց վրա կհրավիրվի հանրապետության պատկան մարմինների ուշադրությունը:

Հ.Գ.

Գորիսից մայրաքաղաք վերադառնալուց առաջ պատգամավոր Արսեն Թորոսյանը գրույց ունեցավ «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանի հետ:

Հարցազրույցի տեքստը (երեք մասից)՝ հաջորդաբար:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/hayots-khorhrdaranakannery-syuniqi-are%D6%82elyan-sahmanagotum>

18.02.2023 թ.

ԵՆԽՎ փաստահավաք առաքելությունը՝ Սյունիքում

Փետրվարի 18-ին Սյունիք էր ժամանել Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵՆԽՎ) փաստահավաք առաքելությունը, որի կազմում էին Հայաստանի պարտավորությունների կատարման մոնիթորինգի համար պատասխանատու համագեկուցողներ Կիմո Կիլյունենին՝ Ֆինլանդիայից, և Բորիանա Օբերգին՝ Շվեդիայից:

Նրանց ուղեկցում էին ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը, ԱԺ պատգամավոր Արուսյակ Զուլհակյանը:

Աղբյուրը՝ <https://www.aravot.am/2023/02/18/1324128/>

17.02.2023 թ.

Գեորգ Փարսյանը մասնակցել է «ԱՐԱՍ ԷՔՄՈՈ 2023» միջազգային ցուցահանդեսին

«Արաս» ազատ տնտեսական գոտու գործադիր տնօրեն, տնօրենների խորհրդի նախագահ, դոկտոր Մաջիդ Քիանիի հրավերով՝ փետրվարի 14-15-ը Կապան համայնքի ղեկավար Գեորգ Փարսյանի գլխավորած պատվիրակությունը երկօրյա աշխատանքային այցով գտնվել է Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) Թավրիզ քաղաքում և մասնակցել 18 տարվա պատմություն ունեցող «Արաս» ազատ տնտեսական գոտու առաջին էքսպո ցուցահանդեսի հանդիսավոր արարողությանը: Պատվիրակության կազմում ընդգրկված էին տարբեր ոլորտներ ներկայացնող տեղի գործարարները:

Համայնքի ղեկավարը պատվիրակության անդամների հետ շրջել է մեքենաշինության, շինարարության, գյուղատնտեսության, սննդի արդյունաբերության և մի շարք այլ ոլորտներ ներկայացնող տաղավարներում, ծանոթացել ցուցադրված ապրանքատեսականուն, զրուցել ցուցահանդեսի ղեկավար կազմի ներկայացուցիչների հետ: Տեղի են ունեցել նաև հանդիպումներ, որոնց ընթացքում ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ հետագա համագործակցության շուրջ:

Այցի շրջանակներում պատվիրակությունը եղել է նաև պատմամշակութային վայրերում՝ Զուլֆայի Սուրբ Ստեփանոս վանական համալիրում (9-րդ դար) և Թավրիզի կենտրոնական շուկայում:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/Kapanmunicipality/posts/204559018781555>

16.02.2023 թ.

Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրի մանկապարտեզի շուրջ 100 երեխայի գրենական պիտույքներ է տվել համայնքապետարանը

Վերիշենի ՆՈՒՀ-ի փոքրիկներն այսուհետև իրենց գեղարվեստագեղագիտական պարապմունքները կանցկացնեն ավելի մեծ ոգևորությամբ. նկարչական պիտույքներ ունեն արդեն, ծեփի համար պարագաներ:

Հիշեցնենք, որ Վերիշենի մանկապարտեզը շուրջ 50 տարի անց հիմնանորոգվել է, համալրվել գույքով: Այս ՆՈՒՀ են հաճախում ոչ միայն Վերիշենի, այլև Ակներ բնակավայրի երեխաները:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/GorisMunicipality/posts/216201837577929>

15.02.2023 թ.

Այսօր Մեղրիում էինք՝ Սյունիքի ամենահարավային սահմանադուռ Նոնաձոր գյուղում

Առաջիկայում, անշուշտ, կներկայացնենք Նոնաձորի իրավիճակը, սակայն շտապենք տեղեկացնել, որ գյուղի ճանապարհին ամոթալիորեն վատ վիճակում է...

2022-ին «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊ ընկերության ղեկավար Ազատ Գասպարյանի և Մեղրու համայնքապետ Բագրատ Զաքարյանի ջանքերով հնարավորինս բարեկարգվել էր այդ ճանապարհը, սակայն դրանով խնդիրը հնարավոր լուծում չի ստացել, զգացվում է հիմնանորոգման կարիք:

Անմիջապես սահմանի վրա գտնվող գյուղը, կարելի է ասել, դուրս է մնացել իշխանավորների տեսադաշտից: Վերջին երկու տարում որևէ իշխանավոր (համայնքի ղեկավարներին նկատի չունենք) չի այցելել Նոնաձոր, իսկ մինչ այդ գյուղ այցելած պաշտոնյաների խոստումները մնացել են թղթի վրա...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/ayzor-mekhrium-einq-syuniqi-amenaharavayin-sahmanadur-nrnadzor-gyukhum>

14.02.2023 թ.

Մարզերի մասնակցությունը՝ կարևորագույն սկզբունք և ռազմավարական առաջնահերթություն կրթամշակութային ծրագրերում

Սյունիքի մարզի մանուկների մշակութային ինքնադրսևորումներին անդրադառնալու մեր նախաձեռնությունն ինքնանպատակ կլինի, եթե լույս չսփռենք (հանրապետության մասշտաբով) երեխաների գեղագիտական դաստիարակության ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականությանը, այդ նպատակով ձեռնարկվող քայլերի, մանուկների մասնագիտական կողմնորոշման, շնորհալի երեխաներին ի հայտ բերելու ջանքերի և նրանց ցուցաբերվող աջակցության վրա:

Այդ հարցերը պարզաբանելու և լուսաբանելու նպատակով էլ գրուցեցինք ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմալյանի հետ:

- Պարոն Խզմալյան, նախ շնորհակալություն՝ մեր հանդեսի հարցերին (այս անգամ ևս) պատասխանելու կամեցողության համար:

Նորություն ասած չենք լինի, եթե փաստենք՝ երեխաների ամբողջական և լիարժեք դաստիարակության համար չափազանց մեծ նշանակություն ունեն գեղագիտական դաստիարակությունը և ընդհանրապես մանուկներին մեր մշակութային արժեքներին հաղորդակից դարձնելը, փոքրիկների մեջ մշակույթի հանդեպ հետաքրքրություններ առաջացնելը, նրանց գեղարվեստական ընդունակություններն ի հայտ բերելն ու զարգացնելը:

Ակնհայտ այդ ճշմարտությունը, մինչդեռ, տարբեր ընկալումներ ունի և իրականացման տարբեր ուղղություններ:

Խնդրո առարկայի վերաբերյալ Ձեր պատկերացումը կուզենայինք իմանալ, կամ գուցե այսպես ձևակերպենք հարցը՝ երեխաների գեղագիտական դաստիարակության տեղն ու դերն աճող սերնդի ձևավորման համակարգում:

Ենթադրում ենք՝ Ձեր պատասխանում կարտացոլեք պետության որդեգրած տեսլականն ու քաղաքականությունն այդ ոլորտում:

- Մշակույթի պահպանման և զարգացման ռազմավարության կարևոր դրույթներից ու գաղափարներից, թիրախային ցուցիչներից մեկը մշակույթի ոլորտում համախառն ընդգրկվածության ապահովումն է ըստ սեռի, տարիքի, մարզերի, հաշմանդամության, սոցիալական խմբերի և այլն: Այսինքն՝ մշակույթը պետք է լինի առավելագույնս ընդգրկուն, առավելագույնս ներառական, և այս գաղափարի մեջ, բնականաբար, կարևորագույն տեղում անչափահասներն են, մեր պատանիներն ու աղջիկները, աշակերտները, ովքեր ոչ միայն մեր ապագան են ու մեր երկրի վաղվա տերերը, այլև՝ մշակույթի վաղվա սպառողները: Այդ մոտեցմամբ, նաև մեր կրթական-մշակութային նախագծերով նախ՝ ձևավորում ենք մշակութային պահանջարկ, ասել է թե՛ մշակույթը պետք է դառնա պահանջ: Մարդը պետք է լիարժեք չհամարվի առանց մշակույթի և այնքան պետք է վաղ տարիքից ընդգրկված լինի մշակութային հարաբերությունների մեջ, մշակութային հաղորդակցության մեջ, այնքան պետք է նրա առօրյան լցված լինի մշակույթով, որ դա պարզապես դառնա բնական պահանջ, ինչպես քաղցն է, ծարավը... Ջրի բացակայության դեպքում մարդն անհանգստանում է և ձգտում դեպի ջուրը, այդպես էլ մշակույթի բացակայության դեպքում պետք է ազդանշանները, ազդակները սկսեն աշխատել ու անհանգստացնել մարդուն: Ու որքան վաղ սկսենք աշխատանքը, այդ պահանջարկի ձևավորումը, այնքան ավելի ընդգրկուն է լինելու վաղվա մշակութային շուկան: Կրթական-մշակութային նախագծերն էլ, որոնք իրականացվում են, բնականաբար, կոչված են ձևավորելու գեղագիտական ճաշակ ու չափանիշ երեխաների շրջանում: Եվ, ի վերջո, նպաստելու մասնագիտական կողմնորոշմանը:

Բազմաթիվ դեպքեր ունենք, երբ երիտասարդը չգիտակցված, ինքնաբերաբար, անպատրաստ ու ակամա հայտնվում է որևէ բուհում և 4-5 տարի սովորելով այդ բուհում՝ ավարտում է այն ու այլևս չի զբաղվում տվյալ մասնագիտությամբ, որովհետև դա իր կոչումը չէ, դրանից ինքը հաճույք չի ստանում: Այսինքն՝ իր կարողությունները բոլորովին այլ տեղ պետք է դրսևորվեին: Այդպես են շատ հաճախ մարդիկ ընդունվում Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա կամ այլ բուհեր: Եվ եթե վերլուծենք ու տեսնենք, թե ավարտողներից քանիսն է զբաղվում իր մասնագիտությամբ, կհասկանանք՝ մասնագիտական կողմնորոշման հարցում մեծ բացթողում է եղել...

- Եվ ի՞նչ ճանապարհով, եղանակով կամ միջոցով են Ձեր նկատառումները կյանքի կոչվում:

Կա՞ պետական ռազմավարություն, և նշանակալից ի՞նչ ծրագրեր կամ նախագծեր կան՝ միտված երեխաների գեղագիտական դաստիարակությանը, մշակույթ-մանուկներ ողջամիտ հաղորդակցության ապահովմանը:

- Ունենք աննախադեպ ծավալի կրթամշակութային նախագծեր, ունենք շարունակական նախագծեր, նոր նախաձեռնություններ՝ «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագիր, «Քո արվեստը դպրոցում», «Դաս Ա», «Քույր դպրոցներ», «Դասարան+Դասական», «Արվեստանոց», «Դպրոցականի ֆիլիարմոնիա», «Ջարդագիր», «ԴասԱրվեստ» և այլն... Դրանցով մեր արվեստագետները հնարավորություն են ունենում անմիջապես շփվել աշակերտների հետ: Աշակերտներն էլ հնարավորություն են ունենում հարցեր ուղղել մասնագետներին, այսինքն՝ հսկայական տեղեկատվական միջավայր է

ձևավորվում հենց աշակերտի համար, որպեսզի նա վաղ տարիքից գիտակցի իր հետաքրքրությունների իրական շրջանակը: Ավելին՝ այդ կրթական-մշակութային նախագծերով, ըստ էության, բարձրացնում ենք մշակույթի և մշակութային գործչի հանրային հեղինակությունը, ճանաչելիությունը, վարկանիշը, և մշակույթը դառնում է մի լուրջ ոլորտ:

Տեսեք՝ թատրոնի մասին մեր երեխաները շատ հաճախ պատկերացում են կազմում զվարճալի կատակախոսություններից, կատակաբանություններից, հաղորդումներից, տնագներից, նմանակումներից՝ կարծելով՝ դա է թատրոնը: Իրականում, մինչդեռ, թատրոնը շատ ավելի բարդ ինստիտուտ է, շատ ավելի բարդ կառույց, որն ունի և՛ արտադրական հատված, և՛ բարդ ստեղծագործական հարաբերությունների դաշտ, որը մի քանի շերտից է կազմված:

«Դասարան+Դասական» նախագծով ցույց ենք տալիս ոլորտի ամբողջ բարդությունը և լրջությունը, որ դա մասնագիտություն է և ոչ պակաս լուրջ մասնագիտություն, քան, ասենք, բժշկի, իրավաբանի: Այսինքն՝ չկան լուրջ և պակաս լուրջ մասնագիտություններ, լրջությունը որոշվում է մեր վերաբերմունքով: Եվ ինչով էլ զբաղվելու լինի վաղվա քաղաքացին՝ պետք է զբաղվի լրջորեն, ու ինչպես ֆրանսիացիներն են ասում՝ «Սեփական անձի հանդեպ՝ հումորով, աշխատանքի հանդեպ՝ լուրջ»: Հենց նախընտրած մասնագիտության հանդեպ լրջությունն ենք ուզում ներարկել երեխաների մեջ:

- Դուք թվարկեցիք մի շարք ծրագրեր, որոնք իրականացրել և շարունակում է իրականացնել պետական լիազոր մարմինը՝ նախարարությունը. ի՞նչ ընդգրկվածություն ունեն այդ ծրագրերը Սյունիքում:

- Գրեթե բոլոր կրթամշակութային նախագծերն իրականացվում են նաև մարզերում: Հանրապետության բոլոր մարզերն ընդգրկված են նախագծերում...

Սյունիքում իրականացվել են «Քո արվեստը դպրոցում», «Զարդագիր», «Քույր դպրոցներ» նախագծերը:

«Փոքրիկ երգիչները» համատեղ հանդես են եկել Սյունիքի պատանի երգիչների և մանկական երգչախմբերի հետ՝ փառատոների շրջանակում:

Այնպես որ՝ մարզերի մասնակցությունը հռչակված է որպես կարևորագույն սկզբունք և ռազմավարական առաջնահերթություն կրթամշակութային մեր ծրագրերում:

Մենք մեր ռազմավարության մեջ ունենք մշակույթի ապակենտրոնացման միտում: Եթե նայեք անգամ դրամաշնորհային հայտերը, ապա կտեսնեք՝ նախագծերը համայնքներում մասնակիորեն կամ ամբողջությամբ իրականացնելը խրախուսվում է: Եվ վստահաբար ասում եմ՝ երբեք չի եղել այնպիսի ժամանակ, երբ այսքան նախագծեր իրականացվեն նաև համայնքներում: Ըստ էության այն, ինչ տեղի է ունենում մայրաքաղաքում, տեղափոխվում է նաև մարզեր, և մարզ-մայրաքաղաք մշակութային համագործակցության ձևաչափերն աստիճանաբար դառնում են ավելի բազմազան: Սա չի սահմանափակվում միայն պատրաստի նախագծերը մարզեր տանելով, մենք կապ ենք ստեղծում կառույցների միջև՝ Գյումրու Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոն-Համազգային թատրոն, Վանաձորի կամերային նվագախումբ և դիրիժոր՝ մայրաքաղաքից, Վանաձորի տիկնիկային թատրոն-Երևանի Հովհաննես Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոն. խառը ստեղծագործական կազմ, հրավիրված ռեժիսորներ, այսինքն՝ միջհամայնքային կապեր:

Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և փալետի ազգային ակադեմիական թատրոնն իր 90-րդ թատերաշրջանի բացումն առաջին անգամ իրականացրեց մարզում՝ Լոռիում, Վանաձոր քաղաքում, Հովհաննես Աբելյանի անվան թատրոնում, որը նաև ուղերձ էր ամբողջ դաշտին ու հանրությանը: Այնպես որ՝ մարզերի ընդգրկվածությունը, կարելի է ասել, մեր կրթամշակութային ծրագրերի կարևոր բաղադրիչներից է:

- Անշուշտ, գնահատելի է ԿԳՄՍ նախարարության դրամաշնորհային քաղաքականության՝ դեպի մարզեր ունեցած ուղղվածությունը: Եվ ուրեմն՝ ի՞նչ պետք է անեն համայնքներում, որ կարողանան գործնականում օգտվել այդ քաղաքականությունից:

- Պետք է ուշադիր լինել պետական դրամաշնորհային հայտարարություններին, մրցույթներին, ծրագրերին և պարզապես գրագետ կերպով լրացնել հայտը: Ոչ ավել, ոչ պակաս: Այսինքն՝ պետք է շատ ակտիվ լինել, գերակտիվ լինել:

Օրերս նախարարությունում ռազմավարության քննարկում էր. ազգային փոքրամասնություններից մեկի ներկայացուցիչը հարց բարձրացրեց՝ ի՞նչ է արվում ազգային փոքրամասնությունների համար: Ես ասացի՝ արվում է այն, ինչ արվում է Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիների համար:

2019 թվականին, երբ նշանակվեցի փոխնախարար, առաջին բանը, որ չեղարկեցի՝ ազգային փոքրամասնություններ անվանակարգն էր, որովհետև համարում եմ՝ դա արհեստական տարանջատում է, դա խտրականություն պարունակող երևույթ էր, քանզի ազգային փոքրամասնության ներկայացուցիչը բացարձակորեն նույն իրավունքներն ունի և նույն հնարավորությունները, ինչ Հայաստանի Հանրապետության այլ ազգերի և հայ ազգի որևէ այլ ներկայացուցիչ: Այնպես որ՝ իրավունքները և հնարավորությունները թե՛ ազգային պատկանելության, թե՛ բնակության վայրով պայմանավորված, բացարձակապես նույնն են: Չպետք է մտածել՝ եթե մարդն ապրում է, օրինակ, Չինարի գյուղում, ապա ինքն իրավունք չունի մասնակցելու Երևանում հայտարարվող դրամաշնորհային մրցույթներին: Որևէ սահմանափակում չկա, կա ակտիվության, ուշադրության, հետաքրքիր գաղափարներ գնեքացնելու և գրագիտության անհրաժեշտություն:

- Արդյո՞ք Ձեր նշած ծրագրերը շարունակական են լինելու 2023 թվականին, և ի՞նչ նոր ծրագրեր կարող են ավելանալ, նկատի ունենք նախևառաջ Սյունիքի մարզում:

- Ի դեպ, «ԴասԱրվեստ» նախագիծը նույնպես իրականացվել է Սյունիքի մարզում. սա մի նախագիծ է, որը վարչապետի անմիջական ուշադրության և հետաքրքրության կենտրոնում է: Այդ նախագծի շրջանակում Հայաստանի ազգային պատկերասրահի կտավները՝ մեծանուն արվեստագետներ Սարյանի, Մինասի, Բաշինջաղյանի և այլոց գործերը, գրաֆիկական աշխատանքները տարվել են համայնքներ ու ներկայացվել, վարպետության դասեր են կազմակերպվել, կրթական ծրագրեր իրականացվել: Եվ կարծում եմ՝ այդ ծրագիրն այս տարի ևս կգործի Սյունիքում:

Տվյալ ծրագրի կարևորությունը հետևյալ սկզբունքն է՝ նախ՝ կարևորել, ապա՝ հասկանալ, ինչը նույնիսկ վերածվեց նշանաբանի:

Այն ամբողջ «անտուրաժ»-ը, որով պարուրված էր «ԴասԱրվեստ» նախագիծը՝ չափազանց ուշագրավ է և ուսուցողական. ոստիկանական մեքենաների ուղեկցում, հատուկ մեքենաներ՝ փոխադրման համար, Հայաստանի ազգային պատկերասրահի ղեկավար անձնակազմ, որ գնում է մարզ, և մարզում տեղական ինքնակառավարման մարմինների,

դպրոցների ղեկավարները՝ աշակերտների հետ, դիմավորում են կտավը: Եվ ամբողջ այդ արարողությունը՝ աշակերտին նախ ստիպում է ուշադրությամբ համակվել օբյեկտի հանդեպ: Այսինքն՝ մեքենան բացվեց, ձեռնոցներով հատուկ մասնագետներն արկղերը հանում են, մեծ ուշադրությամբ և զգուշությամբ տեղափոխում են հատկացված վայր, բացում են արկղերը... Եվ եթե տեսնեիք երեխաների հիացական բացականչությունները, երբ կտավները դուրս էին բերվում արկղերից, կհասկանայիք, որ մեր նպատակին հասել ենք: Զարմանք, ապա բովանդակային աշխատանք... Այ դա կարևոր պայմաններից մեկն է, մի խոսքով՝ շատ հաջողված ծրագիր: Հայաստանի ազգային պատկերասրահի ղեկավարությունը փայլուն աշխատեց. անգամ ճանապարհների վիճակն էր ուսումնասիրվել, թե որ համայնքում ճանապարհային ինչ խնդիրներ և ինչ ենթակառուցվածքներ կան, ինչ պայմաններ կան այս կամ այն դպրոցում, և ըստ այդմ որոշվել է՝ որ կտավը տանել, որը՝ ոչ: Այնպես որ՝ ամեն ինչ համադրվել է:

Այդ ծրագիրը կլինի շարունակական...

Ես մոռացա նշել՝ նաև «Ակունք»-ը եղավ Սյունիքում, մեր ազգագրական համույթը, ընդ որում՝ եղավ շատ բարդ շրջանում, երբ մտածում էին՝ իմաստ ունի՞ գնալ, թե՞ ոչ, բայց փորձը ցույց է տալիս, որ կյանքը, որքան էլ դժվարություններով լեցուն լինի, դարձյալ պետք է ապրվի, և մեզ ոչինչ չպետք է կանգնեցնի կամքից ու այն գիտակցումից, որ պետք է, այո՛, ցույց տալ և ամեն կերպ ընդգծել՝ կյանքը շարունակական է, ու ամեն ինչ չէ, որ ավարտված է: Ուստի և պետք է ակտիվացնել այդ կապերը, առավել ևս սահմանամերձ համայնքներում: Լեվի-լեցուն դահլիճները, դահլիճների արձագանքը մեր ազգագրական մշակույթի նկատմամբ, կարծում եմ, դրա լավագույն ապացույցն են:

- **«Թիկունքը՝ մշակույթ, սահմանը՝ կենտրոն»** ծրագրի շրջանակում էր, որ բազմաթիվ խմբեր այցելեցին սահմանամերձ վայրեր, այդ թվում՝ Սյունիք: Ենթադրում ենք՝ սահմանապահ կամ սահմանամերձ բնակավայրերի հանդեպ ուշադրությունն ավելի կակտիվանա նաև այդ առումով:

- Այո, բազմաթիվ խմբեր, ստեղծագործողներ անընդմեջ, ամեն տարի այցելել են սահմանամերձ համայնքներ՝ կազմակերպելով միջոցառումներ, փառատոներ:

«Տիկնիկների հեքիաթային ճանապարհորդություն» խորագիրը կրող կրթական ծրագիրը՝ դերասան-տիկնիկավար Ադասի Մելքոնյանի նախաձեռնությամբ, ներկայացումներով հանդես եկավ սահմանամերձ բնակավայրերում...

Ուզում եմ շեշտել՝ առանձին համերգաշար ենք սկսել հենց երաժշտական դպրոցի սաների համար, դեկտեմբերին՝ տոներից առաջ. Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի «Առնո Բաբաջանյան» համերգասրահում հանդես եկան մեր պատանի երաժիշտները, կատարողները, այդ թվում՝ Սյունիքից:

- Մի խնդիր էլ կա. բազմաթիվ երեխաներ ունենք, ովքեր, այնուամենայնիվ, լավագույնս են դրսևորվում արվեստի այս կամ այն ոլորտում, նաև միջազգային հարթակներում են ելույթներ ունենում և մրցանակային տեղեր զբաղեցնում:

Հետաքրքիր է՝ կա՞ մեխանիզմ շնորհալի, տաղանդավոր երեխաներին հետագայում տեր կանգնելու և մեծ մշակույթի անդաստանում նրանց «բնակեցնելու» համար:

- Հիմա ուշադրության կենտրոն են բերվում արվեստի և երաժշտական դպրոցների խնդիրները՝ սկսած ուսուցիչների որակավորումից, վերապատրաստման հարցերից և

ավարտված աշխատավարձերի բարձրացմամբ: Ու հիմա համալիր միջոցառումներ են իրականացվում, այդ թվում՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխություն, չափորոշիչների մշակում, երաժշտական դպրոցների ուսուցիչների ատեստավորում, գովազդատեղեկատվական աջակցության ծրագիր՝ արվեստի և երաժշտական դպրոցների համար:

Համերգաշարերը... Երբ մեր պատանիները դուրս էին գալիս բեմ, ընդ որում՝ շատ օժտված պատանիներ, բոլորի մեջ կա մի մեծ բացթողում՝ կաշկանդված են, մռայլ են, անժպիտ, և ստիպված վերջում մի փոքրիկ դաս կարդացի պատանիների համար այն մասին, որ բեմական մշակույթը պահանջում է նաև ժպիտի մշակույթ ունենալ: Երբ դուրս ես գալիս բեմ, դու բեմի տերն ես, դու պետք է ժպտաս, ինքնավստահությունը քո գործիքն է, քո զենքն է, և հիմա դուրս ես եկել, որ հաղթես հանդիսատեսին: Վախեցած ներկայություն, անժպիտ ներկայացում, մոլորված վիճակ և այլն. այդ բաները պետք է չլինեն, բայց որպեսզի մեր պատանիները սովորեն այդպես բեմ դուրս գալ, նրանք պետք է հաճախ դուրս գան բեմ: Եվ մեր համերգաշարի ընթացքում, որ սկսել ենք ու տարին մի քանի անգամ պետք է կազմակերպենք նման համերգներ, կձգտենք ամրագրել մեր ռեսուրսը, գնահատել պատանի տաղանդների ներուժը, որից հետո համապատասխան միջոցառումներով կհետևենք նրանց կարիերայի ընթացքին ու համակողմանիորեն աջակցություն կցուցաբերենք: Ընդ որում՝ համերգներին ներկա են լինելու և՛ Կոնսերվատորիայի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, և՛ երաժշտական դպրոցների տնօրեններ, և՛ ճանաչված մտավորականներ:

Ի վերջո եկեք չմոռանանք՝ գրեթե ամեն գորակոչի ժամանակ շուրջ մեկ տասնյակից ավելի երիտասարդներ են ստանում տարկետման հնարավորություն, և դրանով հնարավորություն ենք տալիս նաև կրթությունը շարունակելու, միջազգային հարթակներում ներկայություն ապահովելու: Դրանց արդյունքները կան... Տարկետումից հետո՝ հաջորդ տարկետման ժամանակ, տեսնում ենք, թե ինչքան մեղավներ, մրցանակներ, ինչ միջազգային մասնակցություն ենք ունեցել: Այսինքն՝ դա ռեսուրսը զարգացնելու կարևորագույն մեխանիզմներից մեկն է, և նման մոտեցումը պետք է լինի նաև մինչև տարկետումը, այսինքն՝ պետությունը պետք է իմանա իր տաղանդի տեղը և իրազեկված լինի իր տաղանդի զարգացման ընթացքի մասին, ավելին՝ պետք է պայմաններ ստեղծի այդ տաղանդի զարգացման համար:

- Մեր կրթական-դաստիարակչական համակարգի առանցքային օղակը, անկասկած, հանրակրթական դպրոցն է: Եվ, որքան տեսնում ենք, հանրակրթական դպրոցների սաներն իրականացվող կրթամշակութային ծրագրերի հիմնական շահառուներն են:

- Ընդամենը մի քանի թիվ. 17 կրթամշակութային նախագծի շրջանակներում մասնակցություն է ունեցել 661 դպրոց, 19 հազար աշակերտ: Սա ընդամենը 17 կրթամշակութային նախագծում, բայց միայն դա չէ, տարաբնույթ այլ միջոցառումներ նույնպես կան: Բայց շատ նախագծերի դեպքում չենք կարող անսահմանափակ թվով աշակերտներ ընդգրկել, որովհետև կրթական պրոցես պարունակող և կրթական-մշակութային նախագծեր ունենք, որտեղ շատ մարդ չի կարող ընդգրկվել, ասենք՝ մեկ դասարան կամ 50-70 հոգի: Դրանից ավելիի դեպքում՝ բովանդակային առումով, վնասներ կունենանք, կկորցնենք թիրախային աշխատանքի հնարավորությունը: Մյուս կողմից՝

կարծում եմ՝ վատ ցուցանիշ չէ՝ 661 դպրոց, 19 հազար աշակերտ: Նրանք հնարավորություն են ունեցել շփվելու մեր լավագույն արվեստագետների, կոմպոզիտորների, դիրիժորների, դերասանների, ռեժիսորների, գրողների, նկարիչների հետ: Դա մշակույթի հանդեպ պատանհանների վերաբերմունքը փոխելու տեսակետից կարևոր լծակ է:

- Մեզ հետաքրքրող հարցում անգերազանցելի է արվեստի և երաժշտական դպրոցների, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների դերը...

Արդյո՞ք գյուղական բնակավայրերի երեխաներն իրենց գեղագիտական նախասիրությունները լիարժեք դրսևորելու հնարավորություն չունեն:

- Համարձակորեն կարող ենք ասել՝ մարզերում երեխաներն իրենց գեղարվեստական, կրթամշակութային պահանջները կարողանում են գոնե կիսով չափ, եթե ոչ ավելի՝ բավարարել: Արձագանքները նաև գրավոր են հասնում մեզ, արձագանքները՝ երեխաների, ամրագրվում են, տեսանկարահանվում, և ոչ թե բանավոր լսում ենք, թե ինչ լավ է անցել տվյալ միջոցառումը: Ունենք տեսագրված կադրեր. ինչ խելոք հարցեր են տալիս աշակերտները, ինչ լրջմիտ սերունդ կա, և բոլոր նրանք, ովքեր վատ են խոսում աճող սերնդի մասին ու թերահավատ են, ուրեմն չեն ճանաչում այդ սերնդին:

Ես շատ բարձր կարծիք ունեմ մեզնից հետո եկող սերնդի մասին, դժվար թե մենք այդ տարիքում այդքան խելոք հարցեր կարողանայինք տալ և այդքան ուշադիր կարողանայինք հետևել մշակութային բովանդակությանը, այդքան ուշադիր լսեինք նկարչի խոսքը, կոմպոզիտորի խոսքը, դիրիժորի խոսքը, այդքան մեծ հետաքրքրություն ցուցաբերեինք այդ ամենի հանդեպ. դրանք բոլորը նկարահանվել են, հաղորդումների են վերածվել և ցուցադրվում են տարբեր հեռուստաալիքներով՝ «Շողակաթ» հեռուստաընկերություն, «armedu.am» կայքից սկսած և վերջացրած մարզային, տեղական հեռուստաընկերություններով: Այսինքն՝ իսկապես արձագանքը շատ մեծ է, մնում է՝ այնքան շատ լինեն այդպիսի շփումները, որ դա դադարի լինել իրադարձություն և լինի ուղղակի առօրյա: Այ դա է կարևորը...

- Երեխաների միջավայրում արվեստի հանդեպ պահանջարկի ձևավորման հարցում, արդեն նշեցինք, մեծ բեռ է դրված երաժշտական և արվեստի դպրոցների վրա: Բայց, անկեղծ լինենք, երաժշտական ու արվեստի դպրոցներն էլ երբեմնի պահանջարկը չունեն:

Չենք ուզում նախորդ տասնամյակների հետ համեմատություններ անել, բայց և չենք կարող չասել՝ Սյունիքի երաժշտական դպրոցներ ընդունվելու համար ժամանակին թե՛ծ մրցակցություն էր լինում, իսկ հիմա՞ ...

- Ես իմ ամենամեծ առավելություններից մեկը համարում եմ այն, որ ստացել եմ յոթնամյա երաժշտական կրթություն: Թեպետ հիմա մեկ նոտա անգամ չեմ հիշում, քանի որ տարիներ շարունակ դաշնամուրին մոտ չեմ եկել: Բայց այն ազդեցությունը, որ իմ հոգեկերտվածքի, մտածողության, ճաշակի վրա կամա թե ակամա թողել է դասական երաժշտություն սովորելը, նվագելը, նոտա հնչեցնելը, անգնահատելի է: Եվ որևէ մեկը չի կարող ժխտել, թե իր ստացած երաժշտական կրթությունը որքան մեծ ազդեցություն է ունեցել իր նկարագրի վրա: Դրա համար, եթե հիշում եք, Խորհրդային Միության օրոք իրեն կիրթ համարող յուրաքանչյուր ընտանիք ձգտում էր, որ իր երեխան պարտադիր ստանա երաժշտական կրթություն: Եվ դրա համար այդքան շատ էին երաժշտական դպրոցները, ու գործիքներ կային:

Մենք 30 տարի շարունակ վարկաբեկել ենք գեղարվեստական կրթությունը, 30 տարի շարունակ անտեսել ենք դրա կարևորությունը և այսօր ունենք ավերված ժառանգություն կամ մի ժառանգություն, որն ավերակ է, ավերակ՝ կադրային առումով՝ արվեստի և երաժշտական դպրոցներում, ավերակ՝ գործիքների առումով, ավերակ՝ տեղեկատվական դիրքավորման առումով: Կարևորագույն այդ ոլորտն ըստ էության փլուզվել է... Հիմա փորձում ենք աստիճան առ աստիճան, քայլ առ քայլ վերականգնել, վերականգնել նոր մոտեցումներով, նոր ձևաչափերով:

- Գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության հետ կապված ազգային մեր ծրագրերը, բնականաբար, սպասվող արդյունքները չեն կարող տալ, եթե ուսումնամեթոդական գրականության մշակման և հրատարակման գործընթացը պատշաճ մակարդակի վրա չլինի: Նկատի ունենք հատկապես երաժշտական և արվեստի դպրոցների ուսումնական գործընթացը:

- Մենք հասկանում ենք, որ այսօր կրթությունը չի կարող չլինել գրավիչ երիտասարդների, աշակերտների համար: Գրավչությունը շատ կարևոր է նաև դասագրքերի առումով: Ուստի և հրատարակում ենք այնպիսի գրքեր, որոնք լինեն գրավիչ, լինեն շատ հասկանալի երեխաների համար: Օրինակ, առաջին անգամ հայոց լեզվով կերպարվեստի պատմության դասագիրք ենք հրատարակել: Ոչ թարգմանական, ինքնուրույն, հայոց լեզվով շարադրված դասագիրք՝ անտիկ շրջանից, նախնադարից մինչև ժամանակակից արվեստ: Դրանք ուղղված են արվեստի դպրոցի սաներին, որոնցով նաև պարապում են, օրինակ, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա ընդունվող դիմորդները: Հարուստ իլյուստրացիոն նյութեր, QR կոդեր, որոնցով կարող են մուտք գործել և թեմային վերաբերող տեսանյութեր դիտել:

Երկրորդ հատորը լույս տեսավ, նախապատրաստվում է երրորդ հատորը, այսինքն նույնիսկ մեր պետական լեզվով դասագրքերի խնդիր ունենք գեղարվեստական կրթության ոլորտում: Եվ մեծ ուշացումով, մեծ բացթողումներից հետո, այդ հարցերով շատ լուրջ ենք զբաղվում:

2008 թվականից նախարարության աջակցությամբ իրականացվել է «Երաժշտական և արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակում և հրատարակում» ծրագիրը: Այն մասնագետների կողմից գնահատվել է որպես բարձր արդյունավետություն ունեցող ծրագիր և իրականացվում է հատուկ այդ նպատակով կազմված մասնագիտական հանձնախմբի օժանդակությամբ:

Օրագրի շրջանակում 2008-2022 թվականներին պետական պատվերով հրատարակվել է 325 անուն գրականություն:

Օրագրի իրականացումը պայմանավորված է մշակութային կրթության որակի բարելավման, ժամանակակից պահանջներին համահունչ ուսումնամեթոդական ձեռնարկների, առարկայական ծրագրերի, աշխատանքային տետրերի, դասագրքերի, ժողովածուների և ուղեցույցների մշակման ու կիրառման, արտադրարկայական ուսումնական հաստատությունների գրքային ֆոնդի համալրման անհրաժեշտությամբ: Այն միտված է նաև գեղարվեստական կրթության ոլորտում ուսուցման նոր մեթոդների վերաբերյալ մասնագիտական շրջանակների իրազեկմանը, դասական և ժամանակակից

արվեստագետների ստեղծագործությունների ու պրակտիկ նյութերի տարածմանն ու հանրահռչակմանը:

Ծրագրի իրականացմամբ լուծվում է նաև հայալեզու մասնագիտական գրականության հրատարակման և տարածման խնդիրը, ապահովվում են նոր դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների, ժողովածուների և գրականության հասանելիությունն ու մատչելիությունը:

«Երաժշտական և արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակում և հրատարակում» ծրագրի շրջանակում 2022 թ. հրատարակվել է 7 ուսումնամեթոդական ձեռնարկ. Արարատ Աղասյան, «Արվեստի պատմություն. Կերպարվեստ (Գիրք 2)», Նաիրա Հովհաննիսյան, Մարիա Դիվանյան, Սրբուհի Բաբայան, Աշխեն Բոյաջյան, «Պատմակենցաղային պարեր, Դասական պար, Հայկական ժողովրդական պար, Ժողրնորոշ պար» (առարկայական ծրագրեր)», Անահիտ Կիրակոսյան, «Հայ ժողովրդական նվագարաններ», Ջեննի Ասատրյան (կազմող), «Հայ կոմպոզիտորների մանկական երգեր», Նունե Պողոսյան (կազմող), «Քրեատոմատիա կիթառի համար» (1-7 դասարաններ), Սուրեն Խորոզյան (կազմող), «Քրեատոմատիա կլարնետի համար» (1-7 դասարաններ), Աղավնի Հովակիմյան, «Քրեատոմատիա սանթուրի համար» (2-5 դասարաններ):

Նշեմ, որ հրատարակված ձեռնարկներն անվճար կտրամադրվեն հանրապետության արտադպրոցական ուսումնական հաստատությունների գրադարաններին:

Տեղեկացնեմ նաև, որ 2023 թվականին նախատեսվում է հրատարակել 11 ուսումնամեթոդական ձեռնարկ:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/marzeri-masnaktsutyuny-karevoraguyn-skzbunq-ev-razmavarakan-arajnahertutyun-krtamshakutayin-tsragrerum>

04.02.2023 թ.

Առողջապահության նախարարության շարժական մամոգրաֆը մինչև մայիս կմնա Սյունիքում

2 տարում շուրջ 17000 կին Լոռիից, Տավուշից և Սյունիքից կրծքագեղձի անվճար սքրինինգային հետազոտություն են անցել, նրանցից 170-ի մոտ հաստատվել է քաղցկեղ՝ նախնական փուլում:

Այս կանանց հետագա բուժումն իրականացվում է Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնում՝ պետպատվերով: Մասնագետները վստահեցնում՝ հենց այս փուլում քաղցկեղի հայտնաբերման դեպքում ապահովվում է 90 և ավելի տոկոս ամբողջովին ապաքինում:

Առողջապահության նախարարության շարժական մամոգրաֆը մինչև մայիս կմնա Սյունիքում: Մարզի 50-69 տարեկան կանայք կարող են անվճար սքրինինգային հետազոտություն անցնել իրենց բնակավայրում:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/ministryofhealthcare/videos/735864171224451/>

Կազմող՝ Ս. Ալավերդյան